

958

206
6-21

1895

1022

1585

2010

1022

1022

953-04

206

С

БРІФІВЛІД/БРІФІЛІ

4145

~~1624~~
1922 Год наст. г. р. 2. Начало
сентябрь

~~280~~
~~956-24~~ Год наст. 1922-го № 2-го квартала
~~206~~ 19
~~C-21~~ 17

ԵՐԵՑՓՈԽԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՐՑԸ

ՄՈՍԿՈԽԱՅՈՒՄ

Audiatur et altera pars!

1005
1006
1007



ՄՈՍԿՈԽԱՅՈՒՄ
ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԻՍԻԴՅԱՐԵԱՆԻ.

1895

(81)

2001

20506-60

36978 и.и.

ԵՐԵՑՓՈԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

ՄՈՍԿՎԻԱՅՈՒՄ.

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 23 мая 1895 года.

Типографія Х. Бархударянъ, Москва, Мясницкая, д. Ермаковыхъ.

ԵՐԵՑՓՈԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

ՄՈՍԿՎԻԱՅՈՒՄ

„Тусклымъ, траурнымъ факеломъ мелькаетъ, напоминая о себѣ зазнавшимся, законъ зла то въ крупныхъ, то въ ничтожныхъ дѣлахъ человѣческой жизни; холодомъ безнадежности вѣеть отъ суда его, не знающаго ни милости, ни извиненія. И каждый отецъ, въ безграничной заботѣ, невольно молить: о сынъ мой! не дѣлай зла — зло нещадно мстить; не извлекай мечта — мечемъ погибнешь!“.

Проф. Л. Е. Владимировъ.
„Законъ зла“.

Ապրիլի մէկին «Մշակի» 38-դ համարում Ռօսկուայից մի նամակ է տպած «Ե. Թաղիանոսեան» ստորագրութեամբ: Տեղինակը, վերջնելով իր վրայ հասարակական հարցերն պարզող քննազատի դերը, կամեցել է հրապարակուէն խոստովանել հայ ընթերցող հասարակութեան տռած այն quasi—ինտե-

լիգենտ փոքրամասնութեան վիրաւորուած ինքնասի-
րութիւնը, որ մասնակցում էր մարտ ամսի 12-ին
Մօսկուայի Գասպարեան անկելանոցի դաշլիճում կա-
յացած ծխականների ընդհանուր ժողովին՝ եկեղեցու-
երէցփոխ ընտրելու համար: «Նամակի» ընթերցողն,
՚ի հարկէ, չի կասկածել, որ պ. Թաղիանոսեանը ձրգ-
ուում է Ճշմարտութեան և կարգի առօրեայ շահերն
պաշտպանող «Ընդհելիթեան» Ալբոնաժնեցի շարքը դա-
ստարել իրան: Նա վստահ զրչով տարուբերել է իր
նամակը «Մշակ»-ին. նրա խիզը չի վրդովուել, ըդ-
գացմունքներն ել չեն բողօքել: Նա համարձակ տա-
րածել է իր անլուայ¹ ձեռքելն կոխկրտուած Ճշմար-
տութիւնը քաջ պաշտպանողի (sic!) յաղթանակին:
Պ. Թաղիանոսեանը գեռ մանուկ հասակից զիտէ, թէ
մարդս բանական և ասուն արարած է², թէ «մար-
դուն Աստուած արար ըստ պատկերի իւրում», —
սակայն ոչ մանկութեան յիշողութիւններն, ոչ ել
,,աստուածանման« կազմակերպութիւնը կարողացել
են նրան որ և է ծառայութիւն անել: Եւ իրաւ,
եթէ մենք մի կողմ թողնենք մի կարգ կողմակի Ճո-

¹ Ինդրում ենք արգոյ ընթերցողներին աչքի առաջ ունե-
նալ, որ մեր յօղուածը գրած է պ. Թաղիանոսեանի «Նամակի»
առթիւ. (պարոնի «Նամակը» արձանագրում ենք մեր յօղուածի
վերջում): Քննելով մի ալդպիսի նամակ՝ մենք ևս ստիպուած
էինք փոքր ինչ կծու եղանակ տալու մեր յօղուածին: Այդ տե-
սակ նամակի պատասխանը ուրիշ եղանակ չի էլ կարող կրել:

² Դրած «— չակերտի մէջ խօսքերն քաղել ենք պ. Թա-
ղիանոսեանի «Մշակ»-ում լոյս տեսած նամակից:

ոսմաբանութիւններ, որոնք միայն երկարացնում են
պ. Թաղիանոսեանի նամակը, մեզ կ'ներկայանայ այն
ժամանակ սանձարձակ կարձամատութեամբ զինւոր-
ուած մի մոքի արգասիք, որ իր պերձախօսութեան
ծաղիկներն քաղում է լինդվիստիկական անբարոյա-
կանութեան տիզմից... և այդ բոլորն նա անումէ՝
մանկութիւններն յիշողութիւններն, իր և կուսակցական
,,աստուածանման« կազմակերպութիւնն արդարաց-
նելու նպատակով... .

Որպի՛, շատ ապրես, մուրազեղ հասնեա:

Պ. Թաղիանոսեանի „աստուածանման“ բնոյթը
զրգուուել է մարտ ամսի 12-ին կայացած Ճխական-
ների ընդհանուր ժողովում տեղի ունեցած գէպքե-
րից: Այդ ժողովը յզացրել է նրա մէջ շատ մոքեր,
որոնց նա նեղութիւն է քաշել արծարծելու իր լայ-
նածաւալ նամակի մէջ: Մենք երկար կանգ չենք
առնիլ պ. Թաղիանոսեանի նամակի արտաքին ձեի,
նրա գրութեան եղանակի վրայ. — պ. Թաղիանոս-
եանի լինդվիստիկական անբարոյականութիւնը ա-
ռանց մեր ապացուցանելուն էլ շատ բացարձակ է:
Ինտելիգենտներն ել երբեմն անբարոյականութիւն-
ներ են գործում, — և նրանց անբարոյականութիւ-
նը, այնպէս ասած, ձեւային անբարոյականութիւն
է, ինտելիգենտ անբարոյականութիւն: Մենք մեզ
թշլ կ'տանք մի քանի նկատողութիւն անել պ.
Թաղիանոսեանի նամակի ներքին բովանդակութեան
մասին: Այդ անելը մենք սախուուած ենք, աչքի ա-
ռաջ ունենալով, նախ այն ինքնուրոյն (օրիги-

нальный) զիրքը, որով պ. Թաղիանոսեանը զենաւորուել է՝ պարզելու հայ ընթերցող հասարակութեան առջև մարտի 12-ին կայացած ծխականների ընդհանուր ժողովին տեղի ունեցած վրդովեցոցի «արարքները», և յետոյ, առանձին մօմենտների և ամբողջ ժողովի ֆիզիօնօմիայի անողորմաղաւաղումն պ. Թաղիանոսեանի կողմից:

Ճիշտ է, ժողովն աղմկալի էր. յարուցած հարցերն քննութեան էին և նմարկվում խօսողների կողմից բուռն էնէրգիայով. — ստկայն ինչու գործը այդպիսի կերպարանք ստացաւ, ով էր պատճառն, որ յարուցած հարցերը դրուեցին կուսակցական հողի վրայ. ինչու 85 ընտրուներից ոչ ոք չընտրուեց. — ահա այն հարցերն, որոնց վրայ հարկաւոր էր կանդառնել: Այդ հարցերն առաջարկվում էին և մարտի 12-ին կայացած ժողովում: մի քանիսներն (‘ի միջի որոց և այդ առջերն զրոյլը) աշխատում էին կարողացածին չափ պատասխաններ տալու: Թաւականցին արդեօք այդ պատասխաններն պ.պ. Թաղիանոսեաններին և ընկ. թէ ոչ. եթէ ոչ, ինչու: Հարցերի ո՞ր շարքը կենդանացրեց իր վրայ ներկայ գտնուողների լուրջ ուշադրութիւնը, և այն, և այն... ահա այն փաստերն, և միայն այդ փաստերն, որոնք հետաքրքիր են վերջիշեալ ժողովին ներկայ չգտնուողների համար: Մինչդեռ պ. Թաղիանոսեանը, զանց առնելով այդ հարցերն ու փաստերը, որոնք զուրկ չեն, անկասկած, և հասարակական հետաքրքրութիւնից, ի զուր զլուխ է կոտրում, քրտինք թափում՝

իր ընթերցողի առաջ կուտալական (sic!) ոգւով լարուած երիտասարդ ձեանալու համար, որի հիամաթափումն մարտի 12-ին կայացած ժողովից անսահման է: Թոյլ կազմուածքի տէր երիտասարդի խանգարուած ջղերն յոգնել են զանգաղ ժողովից, և նրա Փանտազիան սկսում է իր գործը, ծանօթացներով մեզ նրա տրամաբանութեան անհեթեթ (ածուրդնայ) կոլորիտի հետ:

Ахъ, ծեծնայ մալчикъ!...

Սակայն, զա կեղծաւօրութիւն է և ուրիշ ոչինչ. զա նշանակում է նկարուել (рисоваться): Մարդ, որ կարողացել է զրել այնքան յանդուգն հայհրյանքներ մարտի 12-ին կայացած ժողովին մասնակցող ամբողջ մի հասարակութեան մեծամասնութեան հասցեով, անշուշա չի պատկանում նուբր-բնոյթով զարգացածների թւին: Նա, չկարմրելով, աջ ու ձախ է շպրտում իր յանդուգն հայհրյանքներն, աղաւազում է փաստերն, չի քաշում իր սահմանափակ մաքի սանձերն, որ վերջինն չթափի անկիրթ վիրաւորանքներ այն մարդու հասցեով, որը իր կենդանի դատողութիւններով, անսարակցս, բարձր է բոլոր պ.պ. Թաղիանոսեաններից և ընկ: — Տարաբախտաբար, նոր մլրառուած ինտելիգենտ պարօններ, ձեր արհեստն հրախաղութիւն է և ձեր խօսքերն հրափամփուշ (трескучай фейерверекъ):

Եւ այդ արհեստն այդ պարոնների կողմից համարփում է ինտելիգենտ-ծառայութիւն հասարակութեան շահերին, ինտելիգենտ-ծառայութիւն ձշմար-

տութեան շահերին:—Ոչ յարգելի պ.պ., այդ ծառայութիւնը ուշնակէ լիքենոր ժամանակ: Ե, զա՝
првада-кривда!

Բայց, 'ի հարկէ, семья не безъ урода. Գլու-
խուեցին, 'ի հարկէ, մարգիկ, որոնք կուշտ զօւար-
ձացան պ. Թաղիանոսեանի անկիրթ հայհոյանքնե-
րից: Սակայն Աստուած այդ «ինտելիգենտ» բացբե-
րանների հետ: Մենք դառնանք գէպի այն հարցերին,
որոնց մասին լսել է պ. Թաղիանոսեանը:

Մարտի 12-ին կայացած ժողովը բացուեց նոր-
ընտիր նախագահի, պ. Ա. Մամիկոնեանի գեղեցիկ և
ընդարձակ ձառով, որտեղ յարգելի պարոնը ծանօ-
թացրեց ներկայ գտնուողներին Մօսկուայի հայոց ե-
կեղեցիների խորհրդի մօտակայ անցեալ գործունէու-
թեան հետ: Ճառը ընդունուեց տղմլալի ծափահա-
րութիւններով: Բայց ահա իր տեղից բարձրանում է
պ. Թաղիանոսեանի երգուեալ թիկնապահն՝ պ. Տ.
Յովհաննիսեանը և, գառնալով պ. Ա. Մամիկոնեանին,
հարյնում «Խողբեմ ասացեք—ի՞նչ կատ ունի ձեր
ընդարձակ խօսքը այս օրուայ ժողովի հետ»: Խոյն
մեծ աղմուկ է սկսվում, որ և չի դադարում մինչեւ
ժողովը ցրուեն: Արգարութիւնը պահանջում է խո-
տովանել, թէ վերցիշեալ թիկնապահի անտեղի
հարցն է պարզ պատճառ, որ ժողովը հէնց սկզբից
զրուեց իւստակական և առնձնար հողի վրայ: Մեր
կարծիքով պ. Ա. Մամիկոնեանը հասարական գոր-
ծիչն զեր կատարեց, հրապարակօրէն արձարձելով
եկեղեցիների խորհրդի անցեալ գործունէութիւնը,

որտեղ ինքն միշտ գործոն և սրատակից դեր էր խա-
ղացել: Վերցիշեալ թիկնապահի հարցի կուտակցա-
կան աստառն ամենքը հասկացան: Կրքելն երկու
մասն բաժանուեցին. . .

Ես այլ ևս կանգ չեմ առնելու այդ հարցի վրայ,
հրաւիրելով պ.պ. Թաղիանոսեաններին և ընկ. պա-
տասխանատու լինել ժողովում տեղի ունեցած աղ-
մուկին և անկարգութիւններին, այլ ուղղակի կանց-
նեմ գէպի այն հարցն, թէ ինչու երեցփոխ ընտ-
րուեց: Իմ կարծիքով երկու պատճառից պէտք է
ծագած լինի այդ ախուր փաստը:

1) Այն հարցին, թէ տեղային խորհրդարանի ա-
նունից սարքած հայկական երեկոյթը խորհրդի թշյլ-
տուութեամբ էր արգեօք, թէ ոչ,—խորհրդի անդամ-
ներից երկուսը իրարու հակառակ պատասխաններ
տուեցին. մէկը «այս», միւսը «ոչ»: Այդ հրապարակական
հակառաւթիւնը շատ անախորժ տպաւորութիւն թո-
ղեց ներկայ գտնուողների վրայ, միւսնոյն ժամանակ
խորհրդի խօսքն, անշուշտ, զրկելով հասարակու-
թեան հաւատարմութիւնից: Իմ երկու խօսքը ժո-
ղովին այդ հրապարակական հակառաւթեան տոթիւ-
մեծ փոթորիկ բարձրացրեց. ոմանք ծափահարեցին,
ոմանք էլ շուացրին: Անտարակոյս, իմ նկատողու-
թիւնը հարուածեց խորհրդի անդամների և ժողովին
ներկայ գտնուողների locum minoris resistentiae: —
Համաձայնել կանդիգատների շարքը ընկնելու, աչքի
առաջ ունենալով խորհրդի անդամների այդ բաց-
արձակ հակառաւթիւնը, կարծում ենք, գժուար է,

և, աշա, այդ էր պատճառն, որ ժողովին մասնակցող կանդիգասաներից ամենքը, բայցի պ. Գ. Քանանեանից, հրաժարուեցին երեցփոխ ընտրուելուց. (պ. Մ. Փանեանը բացակայ էր). Պ. Գ. Քանանեանի չհրաժարուելն շատերին զարմացրեց: Անցեալ ժողովին էլ պ. Գ. Քանանեանը կանդիգասաների շաբան էր ընկել, սակայն այն ժամանակ նա հրաժարուեց երեցփոխ ընտրուելուց, առաջ բերելով այն, թէ առանց այդ էլ շատ ծանր գործեր ու պարտաւորութիւններ ունի Հազարեան ձեմարանում, և այլն: Սակայն կարելի է թոյլ տալ, որ այդ փաստի համար որ և է բացարութիւն ձարուի: Բայց մենք ամենեին չենք կարող հասկանալ, երբ պ. Թաղիանոսեանը հաղորդում է՝ «երեցփոխանութեան համար քուէարկվեցին Հազարեան ձեմարանի վերատեսուչ Գ. Քանանեան, որ աւագ ջն է ինդիպատն էր»¹, (այսինքն՝ պ. Գ. Քանանեանը պ.պ. Թաղիանոսեանների և ընկ. խմբի կանդիգաստն էր...!?)...): Ուզում ենք հաւատալ, որ պ. Գ. Քանանեանը, համաձայնելով երեցփոխութեան համար քուէարկուել, ինչ ազիտ չգիտէր, թէ «ի՞ւ են նրան ընտրողները»:

2) Ժողովին սկսեց մասնակցել—վաղուց ցանկացած—երիտասարդութիւնը: Բայց այդ երիտասարդութիւնը հինգ առաջին քայլերից ցցց տուեց իր մատաղ բնոյթի սրբնթացութիւնը (պրյուկութիւն): Նա գալիս էր հարցեր վճռելու, հարցեր դատելու՝

¹ Բոլոր կուբսիմները մերն են:

ընտելացած, նախ և առաջ, լոկա-ռու-նեան զիաց-նո-նէն: Նա կռուասէր (придирчивыи) է և մեծամիտ: Նա, առանց կարմրելու, ցեխով էր տալիս իր երեկուայ կուռքերն, որոնելով իր համար... նոր կուռքեր: Նա աշխատում էր առաջ զցել իր նորեկ խմբի անդամներին, չունենալով միենոյն ժամանակ որ և է ապացոյց խորհրդի հին անդամների, հին կանդիգասաների անընդունակութեան վերաբերեալ: Սյդ յարգելի պարոններն, այսինքն՝ խորհրդի հին անդամներն, մեծ ծառայութիւններ են արել տեղւոյս հասարակութեանը դնելով նրա բարեկարգութեան վրայ և՛ շատ ջանկեր և՛ մեծ փողեր: Սյդ բոլորն այժմ մոռացփում է: Հեռու հարուստներն, որովհետեւ նրանց համար, ինչպէս հաղորդում են պ.պ. Թաղիանոսեանները և ընկ., «հարսաւթիւնը փոխարինում է ամեն բան,—և խելք, և դիտութիւն, և բարյականութիւն, և խիզ, և նոյն իսկ հասարակ զրագիտութիւն»:

Հասարակական ծառայութիւնների մեջ ծերացած մարդկի, 'ի հարկէ, չսկսեցին ի զուր վիճել սրբնթաց (прыяткій) նորեկների հետ և հեռացան: Սյդ բոլորի հետեանքն էլ այն եղաւ, որ երեցփոխ ընտրուելու համար կանդիգաստ չճարուեց: Հասարակութեանը ծառայելու համար լոկ ցանկութիւնն շատ քիչ է. հարկաւոր է և կարողութիւն և միջոց՝ այդ ցանկութիւններն իրագործելու, հարկաւոր է փող: Соловья баснями не кормятъ, ասում է ոռւս առածը. լոկ բարի նպատակով հեռու չես դնալ բա-

րեգործական ձեռնարկութիւնների ժամանակ... Այս անդամ ևս պատասխանատութեան ծանր բեռն թող զրուի լիովին պ. Թաղիանոսեանի և ընկ. սրբնաց խմբի վրայ:

Զգիտեմ, որքան ծիշա արծարծեցի ևս այն արխութ փաստի պատճառներն, թէ ինչու մարտի 12-ին երեցփոխ ընտարուեց, այսու ամենայնիւ, կրինում եմ, իմ այդ նկատողութիւններով այն ժամանակ ևս հարուածեցի ժողովին մասնակցողների լօcum minoris resistantiae:

Այժմ զառնանք դէպի պ. Ե. Թաղիանոսեանի «Մշակ»-ում լոյս տեսած բարկաձայթ «Նամակը»:

Ես արգէն ասացի, որ պ. Թաղիանոսեանը խօսք չի բացում այն փաստերի մասին, որոնք կարող են պարզել ընթերցող հաստրակութեան առաջ նրանեղ-կուսակցական Փիզիօնօմիայի տղեղ գծերը: Նա յանձնվում է հանդամանքներից յաղթուած իր սրբնթաց բնոշթի ամուլ յնորքներին: Խանգարուած ջղերն մնում են անսանձ փանտաղիայի երեխայական թռոցքները, որոնք իրանց նպատակ են զրել, առանց քաշուելու, աջ ու ձախ շպրաել վերաւորական խօսքեր: Խօսքերով պ. Թաղիանոսեանը հարուստ է, բայց այդ խօսքերի մէջ միաք չկայ: Նրանք կախուած են մի ֆանտաստիքական անդունքքի վրայ, որտեղ մարդիկ ոչնչով չեն զանազանվում «կենդանիներից», որտեղ պ. Թաղիանոսեանի, ինունչենու-երիտասարդի, հաղութաբական (sic!) յոյսերն ոչ մի բանի վրայ չեն կարող դադար առնել: Այդ „երկուանիների բնա-

կարանը“ սաստիկ զայրացրել է պ.պ. Թաղիանոսեանների և ընկ. «աստուածանման» կոնսարուկցիան...— Դա ծայրայեղութիւն է, լոկ ծայրայեղութիւն, յարգելի պարոններ. . . . Нашъ мильтый малъчикъ լяжнардакъ շарժում է իր ձեռքերն ու ոքերը և, խորասուզուած իր խաղի մէջ, չի նկատում, չի ըգգում, որ ինքն իր „աստուածանման“ Փիզիօնօմիային հարուածներ է հացնում: O sancta simplicitas!...

«Պէտք է արգեօք մի զանազանութիւն լինի մօսկարնակ հայերի և Բօրչալուկի կամ Զանգեազուրի հայերի բարք ու վարքերի մէջ թէ ոչ անկատկած զանազանութիւն պէտք է լինի», — կարգում ենք պ. Թաղիանոսեանի նամակի սկզբում: Այս, պ. Թաղիանոսեան և ընկ., «զանազանութիւն պէտք է լինի, անկատակած»: Մարզիկ զանազանվում են իրարուց. բայց տարածանել այդ զանազանութիւնը այնքան հեռու, ինչպէս անում է այդ պ. Թաղիանոսեանը, որոնել Բօրչալուցիներին և Զանգեազուրցիներին «կենդանաբանական ուղղութեան», — այդպիսի մի կոպիտ յանդնութիւն մենք չենք կարող երբէք թռյաւորել և ներել. . . :

Բայց ահա պ. Թաղիանոսեանի երեխայ-ֆանտազիայի մի արգասիքն էլ բայց բազմադարեան դժբնզակ և ձախորդ պատմական պայմանները այն աստիճան մեռյցել են մեր մէջ մի քանի բարոյական յատկութիւններ, որ նոյն իսկ մայրաքաղաքում ապրելն ու մեծանալը բաւական չեն լինում, որ մի կարգ մարդիկ զուրս կան կենզանական զրութիւնից և մօ-

տենան այն մարդուն, որին «Աստուած արար ըստ պատկերի իւրում»: — Պէսք է հասկանալ, 'ի հարկէ, «ըստ պատկերի» պ. Թաղիանոսեանի և ընկ: — Մայրաքաղաքում ընթացող կեանքի կենդանի միտքն ու փաստերը չեն կապուիլ այսաեղ պ. Թաղիանոսեանի անկապ խօսքերի հետ: Մայրաքաղաքում ընթացող կեանքը շատ անդամ շուարեցնում է պատահական նորէնէցի զիւրաբեկ ուղեղն. սահմանափակ խելքի նեղ սաղմերն, ընկնելով մայրաքաղաքի լայնատարած հրապարակի մէջ, ամբարհաւածում են, ուժերից վեր աշխատում, առաջ քայլում չչափակցած քայլերով և, ընկած մի տեսակ յափշտակման զրութեան մէջ, չեն կարողանում նկատել, որ երկու ձեռքով ու ոտով թաղփում են ցեխի ապահանուած անգունդքը...: Վստահանում ենք հաւատացնել պ. Թաղիանոսեանին և ընկ:, որ պՃնաղարդուել այդ պիսի անառակութեամբ ներկի չէ անգամ Բօքչալուցիներին և Զանգեազուրցիներին, որոնց այնքան չեն յարգում պ. Թաղիանոսեան և ընկ: . .

«Բնարութիւններին մասնակցում էին մօտ 85 ծխական, որոնք բաժանված էին ելիս—ուրշ խմբի», — կարգում ենք պ. Թաղիանոսեանի նամակի մէջ: — Խօսք բացել որ և «որոշ խմբերի» մասին նախ +անժողովի կայնարն, պ. Թաղիանոսեանը, անշուշտ, կարող է: Նա ժողով էր եկել իրեւ անդամ արշէն խաղուած մի խմբի, որը մարտի 12-ին կայացած ժողովից գեղ առաջ խորհրդակցել և վճռել էր անպատճառ պ. Գ. Քանանեանին երէցփոխ ընտրելու:

Ընթերցողս այժմ կ'տեսնի, թէ որքան ուշ ինտելի- գենտ և երեխական ապրով է կառավարվում այդ կոմեզիան: Օրերս, տեսնուելով պ. Թաղիանոսեանի և ընկ. խմբին պատկանող անդամներից մէկի հետ, ես հարցրի նրանից՝

— Ի՞նչն է ձեզ ստիպում ի զուր բամբասել այժմեան երէցփոխից:

— Նա ոչինչ օգտաւէտ բան չի արել:

— Իսկ վլաստ ։ . .

— Նոյնպէս:

— Բայց կարող էք ապացուցել, որ ձեր կանդի- գատը կանի որ և է օգտաւէտ բան:

— Նա ինչ - մի մեծ ծառայութիւն արդէն արել է մեր եկեղեցիներին:

— Այսինքն ։ . .

— Ճիշտն ։ . . ասած ։ . . ես չգիտեմ ։ . . չեմ յի- շում ։ . .

Այդ—մէկ:

Բայց աշա մի նոր փաստ էլ: Պ. Թաղիանոսեանի և ընկ. խմբի միւս անդամն ինձ հաղորդել է՝ „մար- տի 12 ին կայացած ժողովից առաջ մեր խումբը խորհրդակցութեան համար հաւաքուել էր պ. Ն-ի մօտ, և եթէ մէնք փոքր ինչ աւելի ջերմեռանդու- թեամբ գործէնք, — կ'յաղթմէինք“:

— Ի՞նչպէս... այդ անկարելի էր, — նկատեցի ես:

— Նաև յաւ կարելի էր: Մօսկուայում ապրում են շատ հայեր, որոնք այստեղ զրկված են ճա- նաչում. կ'զնաս նրանց մօտ կ'ընդունակ լուսակաց առ 2



թիւնների ժամանակ ձայն տան նրանց, որոնց մենք
ենք ուզում, և նրանք համաձայնում են. . .

Շտապում ենք շնորհաւորել պ. Թաղիանոսեա-
նին և ընկ.՝ նրանց մրցութիւների և պրօպագանդայի
«Էնդէլէֆէնտ» — միջոցների համար: Այդ պարոնների
նպատակը արդարացնում է նրանց միջոցները. . .

Որդի՛, շատ ապրես, մուրազեղ համնես:

Միւս խումբն, որի մասին խօսում է պ. Թա-
ղիանոսեանը, կազմուեց մ.մ. և միմիայն ժողովի
ժամանակ: Այն մեծամասնութիւնը, որ նախագահ էր
ընտրել մի արժանի մարդ՝ պ. Ս. Մամիկոնեանին,
աւելի և աւելի հաստատուելով պ. Թաղիանոսեանի
և ընկ. խմբի կուսակցական «Էնդէլէֆէնտ» արարք-
ների մէջ, կամաց կամաց միացաւ և կազմեց մի նոր
խումբ՝ իր պրինցիպներով բոլորովին հակառակ ա-
ռաջին խմբին:

Ինտելիգենտ! ինտելիգենցիա! որքան քաղցր հնչում
են, և ինչ գեղեցիկ խօսքեր... բայց ի՞նչպէս հաս-
կանալ նրանց, ե՞րբ կամ ում հասցեով գործ ածել
այդ գեղեցիկ խօսքերն... այդ մասին այժմ զրեթէ
երբէք հոգս չեն տանում: — Ենէ դուռ հաճայայն
է+ ի՞մ հետ — «—ը է՞ն դուռ+ «Էնդէլէֆէնտ» է+, — ահա
այն «այլիտակ թելը, որ այնպէս կոպիտ կերպով կա-
պում, միացնում է պ. Թաղիանոսեանի բոլոր ձո-
ռումարանութիւններն: Ահա այդավագ պէտք է որո-
նել այն բանալին, որ կ'պարզե մեզ նրա կոպիտ
փարմունքն արգոյ Ս. Մամիկոնեանի գէմ, որ քանի՛
տարիներ ծառայել է տեղւոյս հասարակութեանը՝

իբրև խորհրդի անդամ, որը կաթողիկոսի ընտրու-
թեան ժամանակ պատգամաւոր է եղել Մօսկուայի
հայերից, և այլն, և այլն:

Բեզ ցու հեծելով Մօսկուայում,
համարես նորեկ, պ. Թաղիանոսեանը վստահանում
է ասել՝ «Այն բաժանումը հնի և նորի կամ աւելի
Ճիշդը՝ նեխածի և թարմի, որ այժմ ամեն տեղ տեղի
ունի մեր կեանքում, վերջին էրկու տարին սկսվել է և
Մօսկուայում...»: — Ես կարծում եմ, բաւական է յի-
շել հանգուցեալ ն. Ներսիսեանին, պ.պ. Զ. Մաերեանին,
Ս. Մամիկոնեանին, Մ. Բարխուդարեանին, Ս. Գ. Յով-
հաննիսեանին և այլն, որ մեր մնափառ նորեկն ամաչի
և կարմրէ... Տարաբախտաբար այժմ այդ տեսակ մար-
դիկ չեն կարմրում! նրանք, մի կողմ թոգնելով փաս-
տեն, խօսքերի շարքերով են մարդ խարում: Ու-
րեմն — հետու ձանապարհից կենդանի միտք և փաստ
ձանաչող, փաստ յարգով առողջ գատաղութիւն...
«Էնդէլէֆէնտ» միաբանածն է զալիս. . . Բայց հետա-
քրքիր է այդ նորեկ-ինտելիգենտների միամտութիւնը:
Բաւական է, նրանց կարծիքով, ձեռք բերել համալ-
սարանական կամ որ և է զպրոցի զիպրօմ, անդիր
անել բառարանից մի-երկու հարիւր կծու, կեղառա-
խօսքեր, և եթէ զգում ես բերանումի յազիկ ծեզ
կօստեյ, — ուրեմն՝ «ինտելիգենտ» եօ: Մեր նորեկ «ին-
տելիգենտներն», «—» ստանալով արհարմարհում
են մտածել անդամ իրեն-էն ևս անհրաժեշտ հա-
մարելու, — այդ պատճառով էլ հասարակական հրա-
պարակ են դուրս գալիս գործելու երբեմն այնպիսի

մարդիկ, որոնք, ձիշտ է, ծանրաբեռնած են լինում զիտութիւնների մեծ պարկով, սակայն նրանց զիտութիւնը զրեթէ միշտ խաչ է և խոնաց: Դրանք վերեւից ցած նայողներ են (верхогляды), որոնց հասարակութիւնը երբէք չի յարգում: Դրանք զուրկ են և՝ լսութեան ու դժուարութիւն չ' էւան+ի բան+ալց: Այդ մարդիկ հասաւ ինտելիգենցիւն են, ծայրայեղութիւններին համեսդ եսականներ: Ոչ զիմաներն, ոչ էլ թղթեղէն զիշտերն, որ մեծ թւով պատրաստում են այժմ զանազան կուսակցութիւններ, կարող են ազատել նրանց, որովհետեւ հէնց առաջին հօդմը կ' կորդի ու կ' խորտակի և զիմաներն և զիշտերն, և այն ժամանակ մամուլի հասաւ իդենտա աշխատակիցներին ուշ է լինի հարցիւլ: Անշնորհակալ հեռացներով զործից բարութեան առանց զիազօմի զործիշներին, մեծարելով նրանց «ամենատարրական» բարեկարգութիւնից զուրկ «առողեր» անունով թէօրեաիկական հասաւ ինտելիգենտ ըմբիշներն, 'ի հարկէ, ընկնում են մեծ մոլորութեան մէջ որից կարող են վնասուել նրանք, որոնց մոռացել են պ.պ. Թաղիանոսեաններն և ընկ:՝ յափշտակուած իրանց մրցումավ:

Սթափուէք, ուշաբերուէք:

«Մէկ խումբը կազմում էին Մօսկվայի հայ ինտելիգենցիայի Ֆժ(?) ճառը և կովկասցի երիտասարդ վաճառականները, թւով 30-35 հոգի», — հաղորդում է պ. Թաղիանոսեանը: Մէնք արդէն զիտենք, թէ ի՞նչ է նշանակում «ինտելիգենտ», «ինտելիգենցիա» բառը պ. Թաղիանոսեանի և ընկ. բերանում: —

ինչու և նրանց հրացանաձգութիւնը այլ ևս չի վախեցնիլ մեզ: Սյսու ամենայնիւ — ուղղել պ. Թաղիանոսեանի սատարիստիկան սուտը մենք անհրաժեշտ էնիք համարում: Պ.պ. Թաղիանոսեանների և ընկ. $\frac{1}{5}$ կամ $\frac{4}{5}$ մ. երիտասարդ վաճառականներից է բաղկանում, բայց Մօսկուայի ինտելիգենտ ծխականների թիւը 'ի հարկէ այնքան փոքր չի (5-7), ինչպէս կարծում է պ. Թաղիանոսեանը: 'ի զէպս. ի՞նչ է, երիտասարդ վաճառականներն մի առանձին ցեղ են կազմում՝ զուրկ որ և է ինտելիգենտ վարք ու բարքից, թէ՝ նրանք առանձնայատկութիւնների տէր ինտելիգենտներ են? . . .

Բայց ահա մի փաստի աղաւազումն էլ: «Մի քանի մարդիկ աշխատում էին վրէժինդիր լինել անցեալ ընարութիւններին սկացած լինելու համար»: — Ես պատիւ եմ ունեցել «անցեալ» ժողովին էլ ներկայ գանուելու և ուղղակի պնդում եմ, որ պ. Թաղիանոսեանի այդ տեղեկութիւնը ևս սուտ է: Անցեալ ժողովին ընարուեց պ. ի. Ժամշարեանը, որն, 'ի հարկէ, չև պատկանում Թաղիանոսեանի և ընկ. խմբին: Պ. ի. Ժամշարեանը կամովին հրաժարուեց երէցփոխի պաշտօնը վարելուց. (ինչպէս անցեալ, նոյնպէս և մարտի 12-ին կայացած ժողովներին նաբացակայ էր): Այդ ամենից մի եղբափակութիւն միայն կարելի է անել. թէ՝ «աշխատում էր վրէժինդիր լինել», անշուշտ, պ. Թաղիանոսեանի և ընկ. խումբը, որի կանգիգատներին սկացըրին և անցեալ ընարութեան ժամանակ:

Մի փաստ էլ: Պ. Թաղիանոսեանը ժողովին այնպիսի ձայներ է լսել, «որ—թող ներուի պ. Թաղիանոսեանին նրա այդ ասածը—կարելի է լսել միայն կենդանաբանական պարտէզում...» Ես ժողովի ամբողջ ընթացքի ժամանակ նայում էի ետին կարգերի վրայ, որտեղ հաւաքուել էին պ. Թաղիանոսեանի և ընկ. խմբի անդամներն. այնաեղ, այդ ետին կարգերում, իրաւ որ մի զարմանալի բան էր կատարվում: Մարդիկ, որոնց «Աստուած արար ըստ պատկերի իւրում», մեքենայական կիստուկների (манекեն) գեր էին կատարում, զսպանակներով, կարծես, միացած պ.պ. Թաղիանոսեանների և ընկ. խմբի պարագուխների հետ: Հենց որ պարագուխները սեղմաւմ էին զսպանակներն, խսկոյն մեծ տղմուկ աղաղակ էր բարձրանում: „աստուածանման“ կերպարանքներն, աշուղի տածով, վանդ-վանդ, երգում էին՝ դա-դա-դա..., կամ՝ հԵՏՅ-հԵՏՅ-հԵՏՅ..., և կամ՝ սկազալ-սկազալ-սկազալ...: Մարդիկ՝ թմրուկի հարուածներին համաձայն՝ մեծ եռանդով էին պարապում իրանց շրմունքների վարժուելովը, բայց տարաբախտաբար... այդ պարապմունքի անմոռութիւնը շատ բացարձակ էր աչքի ընկնում: Եյդ կիստուկների վարքը ու բարքի նկարագրելը մենք յանձնում ենք պ. Թաղիանոսեանին, յիշելով ոռու առածը՝ Սամ սեյ рабա բետք, կոլի նечистո յինետք.

«Եյդտեղ,—հաղորդումէ պ. Թաղիանոսեանը,— մարդիկ փոխանակ խօսելու և ուրիշի խօսածը լսե-

լու, գոռում, գոչում էին, մանչում էին, սուլում էին և առհասարտկ այնպիսի ձայներ էին արձակում, որ, թող ներփե մեզ ասել, կարելի է լսել միայն կենդանաբանական պարտէզում...»:

Կովկասում ասում են՝ մի մարդ, կամենալով իր հարեւանին նեղութիւն տալ, սկսում է իր երեխաներին ծեծել... Յուսով ենք, որ պ. Թաղիանոսեանը միամիտ Կովկասու մէջ կ'ձանաչի իր պատկերն... Հարեւանը լսեց նրա ճշոցը և... հասկացաւ նրան:

NB!

Ապրիլ. Մօսկուա:

Р.С. Յօդուածիս տպագրելը ես զիտակցաբար փոքր ինչ ետաձգեցի, աչքի առաջ ունենալով հետեւալ մօտակայ ժողովին անձամբ բացատրութիւն պահանջել պ. Թաղիանոսեանից: Ամսոյս 14-ին կայացած ընդհանուր ժողովում ես փորձեցի ցանկութիւնս իրագործել բայց պ.պ. «ինտելիգենտ մլըրտուածները» (որոնց արհեստն է սրբնթաց զիրք բռնել (позировать) չափաւորութեան զգացմունքը երբեմն մոռացող, տաքտի պահանջը երբեմն չճանաչող լրագրի սիւնեակներում) «ասիական խուժանին յատուկ», — պ. Թաղիանոսեանի խօսքելով, — աղմուկ բարձրացրին, — և ես հարկադրուած դադարեցրի խօսքս:

Ժողովին ներկայ էր ծխականների չտեսած բազմութիւն. աշագին մեծամամութեամբ նախագահը ընարուեց պ. Ս. Մամիկոնեանը: Պէտք է ընարէին եկեղեցու երէցփոխ և խորհրդի երկու անդամ: Ընտրուեցին խորհրդի անդամներ՝ պ. Ս. Մամիկոնեան և պ. Ա. Ժամհարեան և վերջնարուեց երէցփոխ պ. Ս. Մահարբեկեան:

Սյդ վաստերի ծանրակշխու նշանակութիւնը ակներե է Մօսկուայի հայ հասարակութեան ինքնաճանաչութեան երակի զարկը անշուշտ, արթուն է և զգայուն: Սեայնելով մայիսի 14-ին կայացած ժողովում պ. Թաղիանոսեանի և ընկ. Յարյական արծեր՝ Մօսկուայի հայ հասարարութիւնը ապացուցեց, թէ զիաէ ճանաչել իր իրաւունքները, զիտէ գնահատել իր պատիւը: Ուրախութեամբ ողջունում ենք այդ համակրելի դէպքը: Մի այդ տեսակ ուժին, այսինքն՝ հասարակութեան ինքնաճանաչութեանը, հազիւ թէ կարող կ'լինեն ընդդիմանալ «ասիական խուժանին յատուկ վայրենութեան և յանդուդն ամբարտաւանութեան» «և ջրով մկրտուած «ինտելիգենաները»: Սյդ պարոնները ստիպուած կ'լինեն վերջապէս հրապարակուէն հրաժարուել իրանց առաջարկաւարձուած արհեստաից:

Թէտիսը վրիժառու է, Թէտիսը քենախնդիր է: Մնում է հրաւիրել արդոյ հասարակութեան ուշաղրութիւնը և հետեւեալ դէպքի վրայ: Ժողովում հրապարակ դրուեց, պարզուեց պ. Թաղիանոսեանի և ընկ. „ընտրեալների“ պաշտօնադիմէն արտայայտած եղ-

րակացութիւնները Մօսկուայ հայ հասարակութեան անցեալ մայիսի 12-ին կայացած ժողովի մասին: Դիմակները ձեղքուեցին, ընկան. „աստուածանման“ երեսները այրուեցին, սեացան ձշմարտութեան ձառագայթներից և... պ. Թաղիանոսեանի և ընկ.

¹ Ահա մի քանի քաղուածներ այդ պարոնների պաշտօնապէս արտապատճենացներից.

„Заседание было превращено въ арену ложныхъ, неосновательныхъ обвинений на Цер. Совѣтъ... Поднимается страшный площадной крикъ... Лица интригующія... замѣнить насъ прежними воротилами... Импровизированный ораторъ этой партии... Въ действительности же стремление этихъ лицъ состоить не столько въ желаніи соблюсти интересы нашей церкви, не столько дать правильное и законное теченіе дѣлу, сколько всевозможными сплетнями, вліяющими на невѣжественную толпу, поднять свои фонды и тѣмъ самимъ занять свое потерянное положеніе члена Совѣта...“

Արժանայիշատակ „ընտրեալները“, պ.պ. Ա. Քանանեան, Գ. Խալաթեանց, բժ. Ս. Մուրադեանց և բժ. Ա. Զարգարեանց — խորհրդի անդամ ընտրուեցին անցեալ սեպտեմբերի 25-ին: Մինչ այդ պ.պ. ընտրուելը հայ հասարակութիւնը դեռ ևս ծանօթ չէր պ.պ. Թաղիանոսեանի և ընկ. անհամակրելի նորարուս խմբիկի բարոյական ցենզի հետ, ուստի վերոյիշեալ „ընտրեալների“ ընտրողներին յաջողեց մեծամասութիւն կազմել... Ցիշեցնում ենք պ.պ. „ընտրուածներին“ ուստի առաջը, „Въ большомъ мѣстѣ сидѣть, много надобно ума имѣть...“

Սեղ մուս է ասել երկու խօսք մեր «Թաղիանոսեան և ընկ.» ողի մասին: Ընդունուած է այս կամ այն կուսակցութիւնը լիշելիս հետեւել առաջին՝ a potiori fit denominatio: Այսու

Խմբիկը հեռացաւ գալիճից, չսպասելով ժողովի
արձակուելուն: Նրանց Ճանապարհ դրին մեծ ծափա-
հարութիւններով. . .

Հարեանը անշուշտ հասկացաւ. . .

Sapienti sat!

Մայիս. Մօսկով:

1895 թ.



Պ. ԹԱՂԻԱՆՈՍԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ.

ամենայնիւ մենք մեր ոծը պահպանեցինք, թէպէտ և վերը քա-
ղուած պաշտօնապէս արտայայտած եզրակացութիւնները քացա-
յալու հաստատում են այն, թէ պ.պ. Թաղիանոսեանի և ընկ.
խմբիկը առհասարակ աղքատ չի անկիրթ անհատներով:

Պ.պ. Թաղիանոսեանների ֆիզիօնօմիալի տգեղ գծերը շատ
յաջող նկարագրում են պ.պ. Մ. Բարխուդարեան և Անդրէաս
«Գրականական և Պատմական Հանդիսի» VI-դ գրքում: Պ. Մ.
Բարխուդարեանի յօդուածը տալիս է մանրամասն տեղեկութիւն-
ներ անցեալ սեպտեմբերի 25-ին կալացած ժողովի մասին: Ա-
ռաջարկում եմ պ.պ. յօդուածները ընթերցողիս ուշադրութեանը:

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Մարտի 16-ին.

«Պէտք է արդեօք մի զանազանութիւն լինի մօսկվարնակ հայերի և Բօրչալուի կամ Զանգեզուրի հայերի բարք ու վարքերի մէջ թէ ու. անկասկած, զանազանութիւն պէտք է լինի:

Թերեւս շատերի համար, որոնք միայն լսելով գիտեն, որ Մոսկվայում ապրում են բազմաթիւ հայեր, այդ տեսակ հարցն անգամ տարօրինակ թվայ:

Շատ բնական է, որ կետրօնում, մայրաքաղաքում ապրող մարդկանց բարքերը համեմատաբար աւելի տաշված, կոկված և գոնէ մի փոքր աւելի ազնուացած պէտք է լինեն, քան թէ բիրտ ու վայրենի պայմաններում ապրող մարդկանց բարքերը:

Բայց բազմադարեան գժենդակ ու ձախորդ պատմական պայմանները այն աստիճան մեռցրել են մեր մէջ մի քանի բարոյական յատկութիւններ, որ նոյն իսկ մայրաքաղաքում ապրելն ու մեծանալը բաւական չեն լինում, որ մի կարգ մարդիկ դուրս գան կենդանական դրութիւնից և մօտենան այն մարդուն, որին «Աստուած արար ըստ պատկերի իւրում» :

Մենք փոքրուց լսում ենք, որ մարդս բանական և ասուն

¹Տես «Մշակ», 1895 թ. № 38-դ:

արարած է, բայց եթէ մէկը սոյն մարտի 12-ին ներկայ լինէր Մոսկվայի Գասպարեան անկելանոցի դահլիճում և տեսնէր այնտեղ ժողոված ծխականներից մի մասի արարքները, Հարկադրված կը լինէր Հակառակը կարծելու։ Այդ օրը ծխականների ընդհանուր ժողով էր եկեղեցու երէցփոխ ընտրելու համար։

Են բաժանումը չնի և նորի կամ աւելի ճիշդը՝ նեխածի և թարմի, որ այժմ ամեն տեղ տեղի ունի մեր կեաքում, վերջին երկու տարին սկսվել է և Մոսկվայում, ուր մինչեւ մօտ ժամանակներս ամեն գործում անվիճելի տէր և տնօրէն էին համարվում այն մարդիկ, որոնց համար Հարլատութիւնը փոխարինում է ամեն բան, —և խելք և գիտութիւն, և բարյականութիւն, և խղճ, և նյոն իսկ հասրակ գրագիտութիւն, Բայց երբ այստեղ էլ ասպարէզ դուրս եկան մարդիկ, որոնք առաջին փորձն արեցին հասկացնելու, թէ միմիայն փողով չէ կարելի վարել ազգային —եկեղեցական գործերը այնպէս, ինչպէս կարելի է վարել առետրական ձեռնարկութիւնները, այն ժամանակ այստեղի վաղուց ի վեր Խաղաղ Հասարակական ձաշիճը վըդովից և որբան տիղմ ու տականք կար, երես արեց։

Այդ հանգամանքի շնորհիւ էր, որ Մոսկվայում ներկայ մարտի 12-ին կայացած ծխականների ժողովը անպատճութիւն է բերում ոչ թէ միայն Մոսկվային, այլ և անպատճութիւն կը բերէր նյոն իսկ ամենայետ ընկած գիւղին։ Այդտեղ այդ ժողովում, մարդիկ փոխանակ խօսելու և ուրիշի խօսածը լսելու, գուռում, գոչում էին, մոնչում էին, սուլում էին և առհասարակ այնպիսի ձայներ էին արձակում, որ, թող ներփի մեզ ասել, կարելի է լսել միայն կենդանարանական պարտէզում.., և որ ամենից զարմանալին է, այդպէս վարփողները նրանք էին, որոնք այդ ժողովում մեծամասնութիւն էին կազմում, ուրեմն հարաւորութիւն ունէին իրանց ուղած մարդուն երէցփոխ ընտրել, ինչպէս կարողացան իրանց ցանկացած մարդուն նախագահ ընտրել։

Բայց ինչպէս պարզ երևաց, այդ օրը մի խումբ մարդիկ եկել էին ոչ թէ մի գործ կատարելու, այլ միայն խանգարելու, որ և նրանք անում էին ասիական խուժանին յատուկ վայրենութեամբ և յանդուգն ամբարտաւանութեամբ։ Այդպէս, մարդավարութեան ամենատարրական կանոններին գէմ գնալով, մի քանի մարդիկ աշխատում էին վրէժինդիր լինել անցեալ ընտրութիւններին սկացած լինելու համար։

Ընտրութիւններին մասնակցում էին մօտ 85 ծխական, որոնք բաժանված էին երկու որոշ խմբի։ Մէկ խումբը կազմում էին Մոսկվայի հայ խտելիքենցիայի մեծ մասը և կովկասցի երիտասարդ վաճառականները, թւով 30—35 հոգի. միւս խումբը կազմում էին այստեղի տուղերը, նորնախիջևանցիք և մի երկու՝ համալսարանականներ, թւով 40—45 հոգի. Երէցփոխանութեան համար քուէարկվեցին Լազարեան ճեմարանի վերատեսուչ Գ. Քանանեան, որ առաջին խմբի կանդիդատն էր, և Մ. Փանեան. առաջինը ստացաւ 37 սպիտակ և 44 սկ քուէ, երկրորդը՝ 14 սպիտակ և մօտ 60 սկ քուէ։ Ժողովին նախագահ ընտրվեց Ս. Մամիկոնեան, որը ըստ ամենայնի ամենահարազատ թարգմանն էր այդ օրվայ ժողովի մեծամասնութեան բնազդումների։ Ժողովը ցրվեց առանց երէցփոխ ընտրելու։

Ե. Թաղիանոսեան»:



958

1n

00294644

958



